



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Արարատի մարզի Մրգավետի միջնակարգ դպրոց
ՊՈԱԿ

Թեմա՝ «Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման
գործիքները դասավանդման շրջանակներում»

Վերապատրաստող, մենթոր՝ Գայանե Մանուկյան

Ուսուցիչ՝ Աիդա Պողոսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....	3
2. Գնահատում, արժևորում և չափում հասկացությունների մեկնաբանություն.....	5
3. Ուսուցչի և աշակերտի դերը գնահատման գործընթացում.....	10
4. Գնահատման մեթոդները և տեսակները.....	15
4.1 Գնահատման տեսակները.....	16
5. Հետազոտական աշխատանքի նկարագիրը.....	21
5.1 Նպատակները.....	21
5.2 Խնդիրները.....	21
5.3 Քայլաշարը.....	21
5.4 Գնահատման փուլերը օտար լեզուների ուսուցման ժամանակ	21
6. Եզրակացություն.....	23
7. Գրականության ցանկ.....	24
8. Հավելված 1.....	25
8. Հավելված 2.....	26
8. Հավելված 3.....	27

Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները

դասավանդման շրջանակներում:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողների գործունեության մանկավարժական ախտորոշումը և ուսուցման արդյունքների գնահատումը՝ որպես ուսումնական գործընթացի կարևոր բաղադրատար, մանկավարժական գիտության մեջ և պրակտիկայում կարևորվել են բոլոր ժականակաշրջաններում: Աշակերտի գործունեության գնահատումը, ինքնագնահատումը, սեփականա էության ուսումնասիրումը առաջնային են դիտվել դեռևս հին աշխարհի փիլիսոփայական մտքի ներկայացուցիչները: Անտիկ մտածողներ Սոկրատեսը, Պյութագորասը անձի ինքնագնահատումը դիտարկել են որպես սերնդի արդյունավետ կրթության և դաստիարակության հիմք:

Որոշ հետազոտողներ նշում են, որ մանկավարժական գործընթացում գնահատումը ոչ միայն ախտորոշող, հաստատող, այլև դրդապատճառներ ձևավորող, դաստիարակչական, հոգեբանական գործառույթ ունի (Շ.Ա. Ամոնաշվիլի, Կ.Դ. Ուշինսկի և այլք): Այնուհանդերձ, ուսուցիչը ներկայացնում է մեկ թվանշան, որն արտահայտում է երեխային ու նրա ծնողների ներկայացված նրա առաջադիմության մակարդակը, գործունեության տարբեր ձևերում նրա դրսևորված ակտիվությունը, բարեխղճությունը, կարգապահությունը, ուսումնական նյութի իմացությունը, առաջադրանքների կատարման արագությունը և այլն:

Այսինքն՝ գնահատման ավանդական և ներկա 10 բալային համակարգերը լիարժեքորեն չեն որոշում սովորողի կողմից ուսումնական ողջ տեղեկատվության ընկալման և վերամշակման գործընթացը: Մեկ միասնական գնահատականը անձի ամբողջական բնութագրման պատրանք է ստեղծում, թեև իրականում ունակ է բնութագրելու միայն նրա որոշակի դրսևորումները (Ա. Ամոնաշվիլի):

Անխոս ուսումնառությունը և զարգացումը միևնույն հասկացությունները չեն. Գիտելիքների կուտակման գործընթացը ոչ միշտ է նշանակում անձի համարժեք զարգացում: Անձի զարգացման ցուցանիշներ են մասնավորապես յուրացված գիտելիքներին ու փորձին համապատասխան ինքնուրույն, արդարացված և ճշգրիտ

գործողությունները: Այսպիսով, մեր ուսումնասիրության արդյունքում մենք գնահատման նպատակը դիտարկել ենք ոչ թե որպես որոշակի ծավալի գիտելիքների յուրացման աստիճանների վերաբերյալ տվյալների՝ արտահայտված ձևական, նյութական տեսք, այլև այդ գիտելիքների հիման վրա մարդու զարգացման մակարդակի բացահայտում:

Գնահատման համակարգի արդյունավետությունը կարող է ապահովվել միայն մանկավարժական հետևյալ պայմանների ամբողջությամբ՝ համակարգվածություն, համալիր ամբողջություն, մարդասիրական ուղղվածություն, առարկայականա և թեմատիկ նյութի ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպու,, հոգեբանական և մանկավարժական ախտորոշիչ միջոցների օգտագործում, գնահատման նկատմամբ տարբերակված և անհատական մոտեցում, աշակերների կողմից գնահատման համակարգի գիտակցում, ընկալում և ակտիվ կիրառում ինքնագնահատման և համադասարանցիների գնահատման ընթացքում, գնահատման գործում ակտիվ երկխոսության կիրառում:

2. Գնահատում, արժևորում և չափում հասկացությունների մեկնաբանությունը

«Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները» :

Մենք շատ հաճախ կիրառում ենք գնահատումը, արժևորումը և չափումը եզրույթները գնահատման ներքո, որոնք առնչվում են որոշակի տվյալների պարբերական հավաքման և որոշումներ կայացնելու նպատակով դրանց վերլուծության հետ: Այդ եզրաբառերը երբեմն նույնացվում են, սակայն առկա են ենթիմաստային տարբերություններ: Որոշ դեպքերում այդ եզրույթները ձեռք են բերել նոր իմաստներ կամ իմաստային նրբերանգներ:

Արժևորումն աշխատանքի, արդյունքի, երևույթի արժեքավորության կամ արժեքի մասին հիմնավորված եզրահանգում անելն է: Ուսուցիչներն արժևորում են, թե աշակերտներն ինչպիսի հաջողությամբ կամ ինչ չափով են հասնում իրենց ուսումնական նպատակներին: Ուսուցիչներն աշակերտներին արժևորում են նաև օլիմպիադաներին կամ այլ ստուգատեսների ու մրցույթների նրանց պատրաստականության իմաստով, ինչպես նաև տարեվերջին որոշելու՝ արդյո՞ք նրանք բավարար չափով պատրաստ են հաջորդ ուսումնական տարում կրթությունը բարեհաջող շարունակելու համար, թե՞ ամռանը լրացուցիչ աշխատելու անհրաժեշտություն կա: Արժևորման հիմնավորվածությունը ամրապնդվում է որոշակի տվյալների հավաքմամբ, որոնց օգնությամբ կկայացվեն ճիշտ որոշումներ: Տվյալների հավաքման այդպիսի գործընթացն անվանվում է չափում, եթե

օգտագործվում են քանակական տվյալներ կամ գնահատում, որը կարող է ներառել թե՛ քանակական, թե՛ որակական տվյալներ:

Չափումը մի գործընթաց է, որի միջոցով քանակապես որոշվում է ինչ-որ մեկի կամ ինչ-որ մի բանի տվյալ հատկանիշը, որակը կամ հատկությունն ունենալու աստիճանը: Չափման նպատակը համակարգված քանակական տվյալներ ստանալն է, օրինակ՝ թեստերից (թեստային աշխատանքներից), հարցման տարբեր տեսակներից, հանձնարարված նախագծերից: Ստացված թվային տվյալներն օգտագործվում են արժևորումների ընթացքում:

Գնահատում տերմինը մինչ այժմ մենք հիմնականում օգտագործել ենք չափման իմաստով, չենք տարբերակել «գնահատում» ու «գնահատական տալ» արտահայտությունների իմաստները, բայց ներկայումս այն ձեռք է բերել այլ իմաստներ:

Նախկինում դպրոցում կրթության կարևորագույն արդյունքը ուսման առաջադիմությունն էր, այդ իսկ պատճառով գնահատումը հանդես էր գալիս որպես գիտելիքների ծավալը որոշող նիշ: Այստեղից հետոում է, որ լավ տեսական գիտելիքներին տիրապետող աշակերտները համարվում էին դպրոցի լավագույն աշակերտները, մինչդեռ անտեսվում էր մի հետաքրքիր փաստ, նրանք այդ տեսական գիտելիքները չէին կարողանում պրակտիկայում կիրառել, մինչդեռ մյուսները, ովքեր այդքան էլ լավ չէին տիրապետում տեսական նյութին, հետագա կյանքում շատ ավելի հաջողակ էին լինում: Գնահատումը պետք է լինի ամբողջական և բազմակողմ՝ ներառելով ոչ միայն տեսական գիտելիքների, այլ նաև այնպիսի հմտությունների գնահատումը ինչպիսիք են, օրինակ, ինքնակառավարումը, վստահությունը սեփական ուժերին, սեփական դիրքորոշումն ու վերաբերմունքը որոշակի հարցերի նկատմամբ և այլն:

Գնահատման ավանդական համակարգի հիմնախնդիրների հայտնի հետազոտող Շ. Ամոնաշվիլին իր աշխատության մեջ արժածել է «գնահատական» և «նիշ» հասկացությունների տարբերությանը:

Գնահատականը դատողություն է ինչ որ բանի արժեքի մասին, իսկ նիշը գնահատողական կարծիքի ձևավորում, նյութականացված արտահայտումն է: Գնահատականի միջոցով ուսուցիչը արտահայտում է իր կարծիքը աշակերտի աշխատանքի որակի և արդյունավետության համապատասխանության աստիճանի մասին: Նիշը ընդհանրացնում, ամփոփում է երեխայի հաջողությունները առարկայական, ուսումնական գործունեության որոշակի ոլորտում` (և այն ամենը ինչ դրանից հետո կատարվում է) ֆիզոլոգիական, հոգեբանական, դիդակտիկ առումներով, և այս ամենը նյութականացվում են թվային տեսքով: Թիվը որոշակի քանակ արտահայտող մաթեմատիկական նշան է և արտահայտում է ոչ միայն երեխայի կուտակած գիտելիքների քանակը, այլև դրանց որակը, աշակերտի վերաբերմունքը դրանց նկատմամ, դրանք գործնականում կիրառելու կարողությունը:

Ինչպես ավանդական, այնպես էլ ներկա գնահատման համակարգի կարևորագույն հիմնախնդիրներից է նիշի առաջնայնությունը գնահատականի նկատմամբ: «Նիշը սոցիալապես կարևոր է գնահատականից: Այսպես մարդու ուսուցման, կրթության ու զարգացման ընդհանուր մակարդակը համապատասխանեցվում է նիշային տասբայյան սանդղակին, որը և բնութագրում է նրան որպես անձ: ԵՎ հենց այդ նիշի հիման վրա էլ ձևավորվում է վերաբեմունք տվյալ մարդու նկատմամբ: Նույնիսկ, եթե մարդու իրական զարգացումը զգալիորեն ցածր է նրան նշանակված նիշից, հասարակությունը ընդունում է արդեն այդ ոչ իրական գնահատականը»:

Ներկայումս կիրառելով գնահատման նոր ժամանակակից համակարգը ուսուցիչները ստիպված են աշակերտի գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատել ընդհանրացված թվային նիշով: Ուստի, այժմ էլ սոցիալապես ավելի կարևորվում է նիշը, այլ ոչ իրական գիտելիքները, կարողությունները և հմտությունները, անձի զարգացումը, որոնք ամփոփվում են այդ մաթեմատիկական նիշի մեջ: Սակայն լինելով մաթեմատիկական պարզ նշան այն բավարար հիմք է հանդիսանում մարդու, նրա անձի հասարակական գնահատման

համար: Այդ է պատճառը, որ ուսուցիչները, ծնողները, հասարակությունը երեխաներից ամենից առաջ պահանջում են ոչ թե գիտելիքներ, այլ լավ նիշեր:

Շ. Ամոնաշվիլին իր աշխատության մեջ անդրադարձել է նաև ծնողների, ընտանիքի, հարազատների վերաբերմունքին գնահատման վերաբերյալ: Նա պնդում է, որ ծնողները տան երեխաներին դիմավորելիս չեն հարցնում « ինչ՞ նոր բան ես սովորել», այլ « ինչ՞ ես ստացել» հարցերով: Հարազատները հարցնում են « ինչպե՞ս է սովորում ձեր տղան կամ աղջիկը», և հազվադեպ որպես պատասխան կհանդիպենք, թե ինչպիսի փոփոխություններ կան երեխայի անձի մեջ ուսուցման ընթացքում, քանի որ նման պատասխան ոչ ոք չի ակնկալում, բոլորն էլ սպասում են թվանշանի, որը ինչպես արդեն նշեցինք իրենից ոչինչ չի ներկայացնում:

Ստացվում է այնպես, որ երեխան մուտք գործելով դպրոց արդեն բախվում է «գնահատական» հասկացողության հետ, և այսպես ձևավորվում է իր մեջ ուսման դրդապատճառ հանուն նիշի, դրա հիման վրա էլ ձևավորվում է ինքնագնահատումը: Նա վարժվում է կյանքը գնահատել ըստ իր նիշի: Գնահատելով իր իսկ հատկանիշները՝ երեխան ելնում է ոչ թե իր արտաքին վերլուծություններից, որոնցում դրսևորվում են այդ հատկանիշները, այլ իր գնահատականի, իր՝ որպես անձի հանդեպ վերաբերմունքից:

Այսպիսով երեխան իրեն պիտակավորում է որպես «լավ», «վատ», «միջակ» ելնելով իր գնահատականից, որը և հասարակության կողմից ընդունված է և կիրառվում է, որպես տվյալ երեխային բնորոշող հատկանիշ, պիտակ:

Մինչդեռ գնահատման խնդիրն է՝ օգնել սովորողներին հասնել իրենց առջև դրված նպատակներին և դա հաճույքով անել: Սակայն շատ ուսուցիչներ գնահատական կիրառում են որպես զենք դասարանը կառավարելու համար և նմանկերպ վախ են ներշնչում աշակերտների մեջ: Նման իրավիճակում երեխաները ճնշվում են, ներփակվում և իհարկե այդպիսի հոգեվիճակում դժվար կլինի ինչ որ բան հասկանալ, սովորել: Մինչդեռ նրանք պետք է ճիշտ հակառակը անեն, պետք է հանեն ձախողման տագնապը:

Գնահատումը կարելի է օգտագործել ուսումնառողների ընտրության, հետադարձ կապի, դիագնոստիկայի, ուսումնառողների ուսումնառության դրդապատճառներն ուժեղացնելու և ուսումնառության արդյունքները կանխատեսելու նպատակով: Աշակերտները իրենք կարող են ինքնուրույն իրականացնել դիագնոստիկ ինքնագնահատում, գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում առկա հիմնահարցերը հայտնաբերելու նպատակով:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի վերահսկումը:

Սթիգինս առաջարկում է արդյունավետ գնահատման հետևյալ սկզբունքները, որոնք կնպաստեն սովորողի առավելագույն հաջողության հասնելուն:

Հիմնվելով Սթիգինսի կարծիքի վրա, նշենք, որ ուսուցման գործընթացը, ինչպես նաև գնահատման գործընթացը միտված են նրան, որպեսզի աշակերտը առավելագույն արդյունքի հասնի, դրա համար գնահատումը իրականացնելիս, առավել ևս բարձր դասարաններում, երբ գործ ունենք դեռահասների հետ, պետք է գնահատումը օգտագործենք գնահատումը որպես միջոց աշակերտների ուսումնառությունը խթանելու, ստուգելու համար: Գնահատում պետք է հնարավորիս օբյեկտիվ կերպով իրականացնենք և ապահովենք դրա թափանցիկությունը:

3. Ուսուցչի և աշակերտի դերը գնահատման գործընթացում

Երեխայի հոգեկան և աճնային զարգացման լիարժեքությունը, դրդապատճառների և պահանջմունքների, հետաքրքրությունների և հակումների, ստեղծագործական մտածողության, սոցիալական ակտիվության, բարոյական ինքնագիտակցության զարգացումը մեծապես կախված է ուսուցչի անձից և նրա արհեստավարժությունից: Ներկայիս կրթական կյանքի պահանջները, երբ առաջ են մղվում անձ-անձ փոխհարաբերությունների կարևորությունը և ի հայտ է գալիս կրթության հումանիզացիայի գործընթացը առավել կարևորում են ուսուցչի անձը:

«Մանկավարժական հոգեբանության մեջ ընդունված է առանձնացնել ուսումնական գործունեությանը նպաստող և օժանդակող հետևյալ կարևոր հասկացությունները՝ ուսուցչի անձ, գործունեությունը և մանկավարժական հաղորդակցումը»:

Ուսուցչի անձնային առանձնահատկությունները քննարկելիս առաջնային են դառնում նախ և առաջ այն որակները, որոնք նպաստում են մանկավարժական գործունեության լիարժեք տիրապետմանը: Բնականաբար, ուսուցիչ լինելու համար առաջնային են նրա անձնային որակները, գաղափարային, իմացական և արժեքային ուղղվածությունը, նրա մասնագիտական հիմնային գիտելիքները և հմտությունները:

Թեև գնահատման գործընթացում շատ գործող անձինք կան, բայց մենք կդիտարկենք ուսուցչին որպես գնահատման հիմնական նախագծող: քանի որ ուսուցիչը օգտագործելով գնահատման արդեն ձևավորված տեսակները, ինքն է ընտրում, թե դրանցից որ մեկն օգտագործի՝ հաշվի առնելով տվյալ թեմատիկ միավորի, դասի կամ գործնական վարժության նպատակը և դասարանի առանձնահատկությունները:

Գնահատումը սովորողի ուսումնառության մասին տվյալներ հավաքելու գործընթաց է, որի նպատակը դասավանդումը կատարելագործելու մասին որոշումների ընդունումն է: Որպեսզի ուսուցիչները դասարանում արդյունավետ աշխատեն, պետք է կարողանան լավ գնահատում կատարել, նրանք պետք է՝

- ստույգ տեղեկություններ հավաքելն իրենց աշակերտների ձեռքբերումների ու առաջադիմության մասին.
- դասավանդման գործընթացում այնպես միահյուսեն գնահատումն ու դրա արդյունքները, որ սովորողները օգուտ ստանան դրանից, այսինքն ոչ թե պարզապես գնահատական նշանակեն, այլ մեծացնեն սովորելու ցանկությունն ու բարձրացնեն առաջադիմությունը.
- հասկանան, թե որն է ձեռքբերումների, ուսումնական և անձնական հաջողությունների այն մակարդակը, որին ուզում են հասած տեսնել իրենց աշակերտներին, սահմանեն ձեռքբերումների այդ աստիճանը, որոնց պիտի հասնեն աշակերտները: Սա պետք է ուսուցչի ուշադրության կենտրոնում լինի գնահատման և միավորների հաշվարկման ժամանակ.
- կանխատեսեն և բացառեն իրենց գնահատումների մեջ սողոսկող կողմնակալ, խտրական վերաբերմունքի սկզբնապատճառները.
- օգտագործեն թե՛ գնահատումը, թե՛ նրա արդյունքները աշակերտներին քաջալերելու համար, որպեսզի վերջիններս կարողանան վստահել իրենց ուժերին և պայքարել ուսոման բարձր առաջադիմության և անձնական հաջողությունների համար:

Սթիգինսը նշում է, որ գործիմաց ուսուցիչները հասկանում են այն բարդությունները, որ ծագում են, երբ փորձում են զուգակցել ուսումնառության նպատակները գնահատման համապատասխան մեթոդների հետ, քանի որ սովորողների առաջադիմության մասին ներկայացվող տեղեկությունների համապատասխանությանն ու ճշտությանը պետք է վստահեն և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները: Դասարանում արդյունավետ գնահատման հարցում փորձառու ուսուցիչները գիտեն, թե ինչպես պետք է աշակերտներին իրենց լիարժեք գործընկերները դարձնեն դասավանդման կարևոր նպատակները որոշելու և դրանց որակյալ գնահատական տալու հարցում: Ուսուցիչների Ամերիկայնի դաշնությունը մշակել է ուսուցիչների ուսումնական գնահատման կարողությունների այս չափորոշիչները: Ուսուցիչները պետք է կարողանան տարբերակել գնահատման

նպատակները, ընտրել համապատասխան մեթոդներ և հասկանալ գնահատման յուրաքանչյուր տեսակի դրական և բացասական կողմերը: Գնահատման արդյունքները պետք է ուսուցիչները պարբերաբար հայտնեն աշակերտներին և ծնողներին, բացի դրանց այլ մանկավարժներին կամ քննարկել դրանք նրանց հետ, պետք է կարողանան պաշտպանել գնահատման իրենց կարգը և դրանց սեփական մեկնաբանությունը:

Յուրաքանչյուր ուսուցիչ, մանկավարժ իր գործունեության ընթացում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Մարդու զարգացման ընթացքում մեծ դեր են խաղում անցումային և ձգնաժամային շրջանները: Ձգնաժամերը մարդու զարգացման ուղղու անքակտելի մասն են կազմում, որոնց հաղթահարումը հանգեցնում է նորագոյացությունների առաջացմանը:

Ղարոցահասակ տարիքի կարևոր շրջան է համարվում դեռահասությունը, տվյալ շրջանի տարիքային շրջանակները ընդգրկում են 16-19 տարիքային սահմանները: Այս փուլում անցում է կատարվում մանկությունից դեպի հասունություն:

Այս շրջանի կարևորագույն բնութագրականն է Ես-ի ձևավորումը և հասունության զգացումի առաջացումը: Դեռահասը ձգտում է հավասար դիրք գրավել մեծահասակների հետ: Ինքնագնահատականի վրա ազդող հիմնական գործոնները խառնվածքը, ընտանիքը, դպրոցը, դասարանի միջավայրը և շրջապատն են: Որպես կանոն, որքան բարձր են սովորողի հաջողությունները ուսման մեջ, այնքան բարձր է նրա ինքնագնահատականը: Այդ իսկ պատճառով դասավանդողների դերը մեծ է սովորողների ինքնագնահատականի ձևավորման գործընթացում: Դասավանդողը պետք է օգնի, որպեսզի սովորողը կարողանա ճիշտ գնահատել իր հաջողություններն ու անհաջողությունները: Եթե նկատում ենք, որ սովորողն ունի ցածր ինքնագնահատական, պետք է փորձենք նրա թեկուզ

ամենաչնչին հաջողության մասին բարձրաձայնել՝ ցույց տալով, որ սա նրա սեփական ջանքերի արդյունքն է: Բայց սա չի նշանակում, որ պետք է կեղծել խոսքը իրական հաջողության մասին է:

Աթիգինսը նոր տեսակետ է առաջ քաշում, ըստ որի սովորողների հաջողությանն առավելագույնս նպաստող դասավանդման կատարելագործմանն ուղղված որոշումները, չափահասները չեն ընդունում: Այսինքն՝ ուսումնառության ընթացքում սովորողների հաջողությունը կամ ձախողումն առավելագույնս պայմանավորող որոշումներն ընդունվում են հենց իրենց՝ սովորողների կողմից: Սովորողները իրենք են որոշում արժանի՞ են արդյոք գիտելիքներն այդ ջանքերին, որ պահանջվում են դրանք ձեռք բերելու համար: Իրենք են որոշում՝ արդյոք իրենց բավարար չափով ունա՞կ են համարում տվյալ դասը, նյութը, թեման սովորելու համար: Այս որոշումները նրանք կայացնում են՝ հիմնվելով սեփական ուսումնական առաջադիմության տվյալների իրենց մեկնաբանության վրա:

Այստեղից հետևում է, որ ինչ էլ որ արած լինենք, նախ պետք է օգնենք աշակերտներին հավատալ, որ ուսումնառության մեջ հաջողության հասնելու հնարավորություն ունեն և դրա համար պետք է մեծ ջանքեր թափել և այդ հաջողությունը արժանի է այդ ջանքերին: Որպեսզի սովորողները ճիշտ որոշումներ կայացնեն, նրանք կարիք ունեն տեղեկություններ ստանալ իրենց առաջընթացի մասին: Այն միտքը, որ նրանք գնահատման գործընթացում ուսուցչի գործընկեր են դառնում, նրանք արագ հասունանում են: Այստեղ ուսուցչի հիմնական ուղղորդող հարցը պետք է լինի՝ ինչպե՞ս կարող ենք օգնել աշակերտներին, որ սովորեն, ինրպե՞ս օգնենք նրանց հասկանալ, որ իրենք ընդունակ սովորողներ են:

Երբ ուսուցիչը գնահատման գործընթացը բաց ու մատչելի է դարձնում սովորողների համար և ընդունում է նրանց որպես լիիրավ գործընկեր: Լիիրավ համագործակցություն ասելով չպետք է հասկանալ միայն սովորողների ներգրավումը միմիայն ստուգողական կամ տնային աշխատանքները գնահատելու գործում, այն ավելի խորն է:

Ի՞նչ կարող են անել սովորողները գնահատման գործընթացում.

- ստուգողական աշխատանք կատարել և գնահատվել,
- ստուգողականի, քննության ընթացքը կատարելագործելու մասին մտքեր ու կարծիք հայտնելու առաջարկություն ստանալու ուսուցչի կողմից,
- գնահատման հնարավոր առաջադրանքներ, վարժություններ առաջարկել,
- գնահատման առաջադրանքներ, վարժություններ մշակել
- ուսուցչին օգնել գնահատման չափանիշներ մշակելու գործում
- ինքնուրույնաբար մշակել գնահատման չափանիշները
- հասկանալ, թե ինչպես են գնահատումն ու արժևորումը ազդում իրենց սեփական առաջադիմության աճի կամ անհատական զարգացման,
- հասկանալ, թե իրենց ինքնագնահատումն ինչպես է առնչվում իրենց սեփական առաջադիմության բարձրացման ու անհատական զարգացման վրա:

Եթե ուսուցիչներն աշակերտներին ներգրավում են գնահատման գործընթացում, նրանք գիտակցում են, որ աշակերտները գնահատման արդյունքներն օգտագործում են այնպիսի որոշումների կայացման համար, թե արդյոք դպրոցն «աշխատո՞ւմ» է իրենց համար, թե՛ ոչ: Դասարանական գնահատման ժամանակ ուսուցիչները պարտավոր են սովորողների համար մատչելի ու հասկանալի դարձնել այն տեղեկությունները, ինչպես նաև գնահատման կարգը, մեթոդները, որոնք նրանց անհրաժեշտ են ժամանակի ընթացքում աճելու համար:

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մեթոդը (հունարեն Methodos՝ ճանաչողական կամ հետազոտական ճանապարհ, տեսությունն ուսմունք բառից է), որը նշանակում է ինչ որ բանի ուղի: Սկզբնապես այն նշանակել է դեպի որևէ նպատակ տանող ուղի: Իսկ հետագայում իմաստափոխվելով գործածվել է իբրև բնության և հասարակական կյանքի երևույթների հետազոտման, ինչպես նաև գիտելիքների ուսուցման եղանակ:

«Ուսումնական մեթոդը դասավանդողի և ուսումնառողի կարգավորված փոխկապակցված գործունեության եղանակ է, գործունեության ճանապարհ՝ ուղղված ուսուցման գործընթացում դրված նպատակների իրականացման, խնդիրների լուծմանը» :

Մեթոդները ապահովում են արդյունքներին հասնելը: Դրանք ձևավորվում են՝ ելնելով նրանից, թե ուսուցման տվյալ հատվածի ելքում ուսումնառողները.

- ի՞նչ պետք է իմանան,
- ի՞նչ պետք է կարողանան,
- ի՞նչ արժևորել (մոտիվացիա, դիրքորոշում)

Հ. Պետրոսյանը նշում է, որ ուսուցման գործընթացի վերջում ստացված արդյունքները պետք է արժևորվեն և գնահատվեն ելակետային իրավիճակի հետ համեմատության միջոցով: Դա նշանակում է, որ որոշակի նշված չափանիշներին համապատասխան պետք է արժևորել և գնահատել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետություն: Քննարկենք գնահատման գործընթացի կազմակերպման մի քանի մեթոդներ, որոնք կնպաստեն ուսուցման գործընթացի բարելավման:

«Հ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով սահմանել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները» :

Գնահատման չափանիշների ներդրումն իրականացվելու է հետևյալ ժամանակացույցով.

1) 2023-2024 ուսումնական տարի՝ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր դասարաններում.

2) 2023-2024 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 2,5,7,10-րդ դասարաններում.

3) 2024-2025 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 3,6,8,11-րդ դասարաններում.

4) 2025-2026 ուսումնական տարի՝ ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 1,4,9,12-րդ դասարաններում:

4.1 ՉՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ.

հայտորոշիչ գնահատում
ծնավորող գնահատում
ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ՉՆԱՀԱՏՈՒՄ

1. Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ:
2. Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:
3. Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1. թեստ.
2. բանավոր հարցում.
3. բաց հարցերով քննարկում.
4. գործնական աշխատանք.
5. գրավոր աշխատանք և այլ ձևեր:

Նախնական հայտորոշիչ թեստի հիմնական հատկորոշիչները, որոնք կազմում են, այսպես կոչված, թեստի «անձնագիրը», որոշում են թեստի կառուցվածքն ու բովանդակությունը: Դրանք են՝

Ո՞ր դասարանի համար է նախատեսված:

Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում:

Ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է կազմված:

Հատկացված ժամանակը

Կառաջադրանքի տիպը:

Նախնական հայտորոշիչ թեստի առանձնահատկություններն են՝

1. Ստուգում են սովորողների ընդհանրական /ֆոնային/ գիտելիքները ուսուցանվելիք թեմաներից:
2. Օգտագործվում են տարբեր տիպի առաջադրանքներ՝ փակ և բաց հարցերով՝ որոնք ենթադրում են մեկ ճիշտ պատասխանի կամ բազմակի ընտրության, լրացման, կարճ պատասխանով, կամ համապատասխանեցման առաջադրանքներ:
3. Հարցերը պետք է ձևակերպվեն կարճ, պարզ և մատչելի:
4. Բարդության աստիճանը պետք է լինի պարզից բարդ: Կարևոր է որոշել յուրաքանչյուր սովորողի, այդ թվում բարձր մտավոր ունակություններ դրսևորող սովորողի, գիտելիքների, հմտությունների մակարդակը, որպեսզի արդյունավետ կազմակերպվի յուրաքանչյուր սովորողի ուսուցման և ուսումնառության ընթացքը:
5. Տևողությունը հարաբերականորեն երկար է:

Կարևոր է նշել, որ ելնելով նախնական հայտորոշիչ թեստի նպատակից, արդյունքները վերլուծում է միայն ուսուցիչը, քանի որ նպատակ ունի ճիշտ պլանավորելու հետագա ուսուցման և ուսումնառության գործընթացը, ելնելով ստացված արդյունքներից: Նախնական հայտորոշիչ թեստը միավորով չի գնահատվում:

Բանավոր հարց ում կամ բաց հարցերով քննարկում

- Նախնական հայտորոշման մյուս ձևը բանավոր հարցումն է: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու մեխանիկորեն վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրացման, լեզվամտածողության, վերարտադրելու և ստեղծագործական կարողությունների մասին:
- Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.
- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- մնացորդային գիտելիք,
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն:

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Ձևավորող գնահատման խնդիրն է ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը.

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը.

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում:

Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

- 1) գրավոր կարճ հարցում (թեստ).
- 2) բանավոր հարցում.
- 3) գրավոր աշխատանք.
- 4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
- 5) տնային աշխատանք.
- 6) նախագծային աշխատանք.
- 7) քննարկում, բանավեճ.
- 8) այլ:

Ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները:

Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

անյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

5. Հետազոտական աշխատանքի նկարագիրը

5.1 Նպատակները

Որոշել սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանը:

5.2 Խնդիրները

1. օգնել աշակերտներին հասնել իրենց առջև դրված նպատակներին և դա հաճույքով անել
2. ապահովել գնահատման գործընթացի հավաստիությունը, հուսալիությունը, օբյեկտիվությունը, մատչելիությունը, արդարությունը և թափանցիկության սկզբունքները:
3. դասավանդման գործընթացում այնպես միահյուսեն գնահատումն ու դրա արդյունքները, որ սովորողները օգուտ ստանան դրանից, այսինքն ոչ թե պարզապես գնահատական նշանակեն, այլ մեծացնեն սովորելու ցանկությունն ու բարձրացնեն առաջադիմությունը
4. Եզրահանգումներ կատարելիս հաշվի առնել,թե աշակերտները ինչպես են ինքնուրույն իրականացնում դիագնոստիկ ինքնագնահատում, գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում առկա հիմնահարցերը հայտնաբերելու նպատակով:

5.3 Քայլաշարը

Հետազոտական աշխատանք իրականացնելու համար որպես օրինակ գնահատման ձևերը իրականացրել ենք 2022-2023 ուս. տարում 6-րդ դասարանում, որտեղ սովորում են 22 աշակերտ,10տղա,12աղջիկ:

Թեմա՝ «Lebensmittel» (սննդամթերք):Ընտրել եմ մեկ թեմա և փորձել այդ թեմայի շրջանակում իրականացնել գնահատման երեք տեսակները:

5.4 Գնահատման փուլերը օտար լեզուների(գերմաներեն) ուսուցման ժամանակ

Ելևելով երեխաների տարիքայի առանձնահատկությունից թեման սկսեցինք մտազրոհ մեթոդից կիրառելով գնդակ, հարց ու պատասխանի մեթոդը: Այս մեթոդների միջոցով երեխաները վերհիշեցին իրենց արդեն հայտնի սննդամթերքի տեսակները, թեմայի վերաբերյալ բառապաշարը գերմաներենով: Ստուգեցինք երեխաների ընդհանրական /ֆոնային/ գիտելիքները ուսուցանվելիք թեմայից իրականացնելով հայտորոշիչ գնահատում:

Հաջորդ փուլում (*ձևավորող գնահատում*) թեմայի վերաբերյալ յուրացնելով նոր բառապաշարը՝ գրատախտակին տեսակավորեցինք սննդամթերքները՝ ուտելի, ըմելի, առողջարար և ոչ առողջարար:

Նյութը ամրապնդելու համար հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը իրականացրեցինք գրավոր կարճ հարցում (թեստ), որպեսզի կարողանանք համեմատել աշակերտների՝ տվյալ պահի թեմայի վերաբերյալ անհատական գիտելիքները նրա նախկին գիտելիքների հետ: Հավելված 1

Առաջադրանքը ամփոփելու համար փորձելով ապահովել աշակերտների միջև փոխադարձ հետադարձ կապ, բացահայտեցինք, թե առաջադրանքի կատարման ընթացքում աշակերտները ինչ դժվարություններ ունեին, ինչի հիման վրա էլ փորձեցինք բարելավել աշակերտների ուսումնառության արդյունքները:

Հանձնարարվեց փոքրիկ գործնական աշխատանք տես՝ Ի. Բիմ 6 դաս., վարժ.13: Հավելված 2

Վերջնարդյունքը (*ամփոփիչ գնահատում*)՝ աշակերտների ուսումնական ձեռքբերումը գնահատելու համար, թեման ամփոփել ենք թեմատիկ աշխատանքով: Իրականացնելով՝ ամփոփիչ, միավորային գնահատում: Հավելված 3

Ամփոփելով պետք է նշել՝ գերմաներենի ուսուցումը զարգացնում է ոչ միայն լեզվական կարողությունները, հմտությունները, գրագիտությունը, քերականությունը, սովորել սովորելու կարողությունը, այլ նաև օտար լեզուների ընկալումն ձայնալսողական ապարատի միջոցով, մշակութային ընկալումը, համեմատելու կարողությունը, օտար լեզվով ինքնարտահայտվելու կարողությունը:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անձի գնահատման, ինքագնահատման և ինքնաճանաչման գաղափարները և սկզբունքները բազմիցս արծածվել են դեռևս անտիկ փիլիսոփաների աշխատություններում, մանկավարժական մտքի տեսության և պատմության մեջ:

Այսօր գնահատման ավանդական և ոչ ավանդական համակարգեր էապես բարեփոխվում են և զարգանում: Փոխվում են այդ համակարգերի նպատակային դրույթները, որոնք և արտացոլում են գնահատման նկատմամբ մոտեցումները:

Գնահատման համակարգը՝ որպես ուսուցման գործընթացի հիմնական բաղադրատարր, պետք է մանրամասն, ծավալուն, բովանդակալից ու մատչելի տեղեկատվությամբ հաղորդվի ծնողներին ու սովորողներին, նպաստի անձի սուբյեկտիվության, ինքնուրույնության, անդրադարձ կատարելու ունակության ձևավորմանը, օգնի սովորողի ինքնիրացմանը, նրա մտահորիզոնի և աշխարհայցքի ընդլայնմանն ու արժեքային համակարգի ձևավորմանը:

Մեր ամբողջ մանկավարժական փորձի հիմքում ընկած է արդեն մեզ հայտնի գնահատման մեթոդները, մեր առաջադրված խնդիրն էր կատարել աննշան փափոխություններ արդեն առկա գնահատման մեթոդներ վրա և ապահովվել գնահատման թափանցիկությունը, արդյունավետությունը, որպեսզի աշակերտը իր հերթին գնահատականը չդիտարկի որպես նիշ, այլ որպես իր աշխատանքի որակի և արդյունավետության համապատասխանության աստիճանի մասին վկայող գնահատական:

Մեր կողմից անցկացրած մանկավարժական գիտափորձը ցույց տվեց, որ ընտրված մեթոդները նպաստեցին մեր կողմից առաջադրված նպատակին հասնելուն աշակերտները նեուրապես ներգրավվեցին գնահատման գործընթացին, որն էլ իր հերթին իրենց մեջ ձևավորեց պատասխանատվություն գնահատման նկատմամբ, ինչպես նաև այդ բարդագույն գործընթացում իրենց կարևորությունը զգալ:

7.ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Ա. Ս. Սահակյան «Մանկավարժություն», մանկավարժ 2005
2. Խուդոյան Ս. «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները»-Երևան: Զանգակ-97, 2004
3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն. Երևան 2008
4. Պետրոսյան Հ. «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ», Երևան 2012, էջ 563
5. Амонашвили Ш.А. «Личностно-гуманная основа педагогического процесса » Липецк 1990, 95с.
6. Джуринский А. Н. «История педагогики», М., ВЛАДОС 1999, 430 с.
7. Ушинский К. Д. «Избранные педагогические сочинения» М. 1974, В -2-х, т. 1,583с
8. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760>
9. <https://online.fliphtml5.com/fumf/grwr/#p=1>, Բիմ Ի. Լ., Չերմաներեն 6

Հավելված 1

Պարզ

1. Ընդգծել ավելորդ բառը

Թարգմանել բառերը

1.1 Der Käse die Milch die Tomaten die Butter

1.2 die Gurke der Zucker der Kohl die Kartoffeln

1.3 die Orange der Kaffee der Tee der Saft

1.4 der Reis die Wurst die Nudeln das Frühstück

Մինչին

1. Լրացնել հոդերը և ընդգծել ավելորդ բառը

Թարգմանել բառերը, կազմել բառակապակցություն, յուրաքանչյուր շարքից նախընտրելի մեկ բառով

1.1 KäseMilch Tomaten Butter

1.2 GurkeZuckerKohl ...Kartoffeln

1.3....OrangeKaffe ...Tee ...Saft

1.4.... Reis Wurst Nudeln Frühstück

Բարդ

Լրացնել հոդերը և ընդգծել ավելորդ բառը, թարգմանել բառերը, կազմել նախադասություն, յուրաքանչյուր շարքից նախընտրելի մեկ բառով

1.1 KäseMilch Tomaten Butter

1.2 GurkeZuckerKohl ...Kartoffeln

1.3....OrangeKaffe ...Tee ...Saft

1.4.... Reis Wurst Nudeln Frühstück

Հավելված 2



Հավելված 3

Thematische Arbeit

1. Welches Wort passt die Reihe nicht? Ergänzt die Artikel.(2-0,5)

1. Mandarine KirscheKartoffelnApfel
2. Fisch ... Wurst ... Milch ... Schinken
3. Käse ... Butter ... Ei ...Joghurt
4. Kuchen ...Chips ...Torte ... Schokolade

2.Ergänzt die Fragen mit dem Pronomen *welch-*. (2- 0,5)

1.Welchen Saft möchtest du kaufen?

- Den Apfelsaft.

2.....Brot ist heute billig?

- Das Schwarzbrot.

3.Obst magst du?

- Bananen und Birnen.

4.Schokolade isst du gern?

- weisse Schokolade.

3. Ergänzt die Komparationsformen der Adjektive.(3 -0,5)

1. Kartoffeln esse ich gern. Ich esse Obst als Fisch. Fleisch esse ich am..... .

2.Milchprodukte schmeckt mir so wie Süssigkeiten. Der Gurkensalat schmeckt mir

3. Doris isst abendsIhr Bruder Max isst mehr als sie.Aber ihr Bruder Leo isst am

4.Was isst du? Bildet Sätze.(3 -1)

1. Was isst du zum Frühstück?

Zum Frühstück esse ich.....

2.Was isst du zum Mittagessen ?

Zum

3. Was isst du am Abend?

.....